ՀՀ վարչական դատարանին
23 շ, Գարեգին Նժդեհի փ, ք. Երևան, 0026, Հայաստան

Դիմող՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպության
4-րդ հարկ, 1/3 շ, Բյուզանդի փ, ք.Երևան, Հայաստան

Հաշվառված՝

ներկայացուցիչ՝

Արտակ Զեյնալյան,
Բնակվող՝
18 բն, 16 շ, Հր. Քոչարի փ,
ք. Երևան, 0012, Հայաստան

Ծանուցման հասցե՝ 12 բն, 116 շ, Հանրապետության փ, ք. Երևան, 0001, Հայաստան

Պատասխանող՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն
(ստորաբաժանման ղեկավար Կ. Խաչատուրյան)
35/2, Կոմիտասի փ, Երևան, Հայաստան

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ
տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու մասին

ՀՀ Վարչական դատարանին ենք դիմում՝ իրացնելով հայցվորի ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայով (հետայսու՝ Կոնվենցիա), «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքով (հետայսու՝ Օրենսգիրք) ամրագրված դատական պաշտպանության իրավունքը:

- **Հայցի էության հակիրճ նկարագրությունը**

- Կազմակերպությունը Կադաստրից պահանջել է Երևան քաղաքի փակ շուկայի վերաբերյալ տեղեկատվություն: Կադաստրը Կազմակերպությանը հայտնել է, որ տեղեկատվությունը կտրամադրի վճարելու դեպքում: Դատարանից պահանջում ենք պարտավորեցնել Կադաստրին հայցվող տեղեկատվությունը տրամադրել էլեկտրոնային փոստով՝ անվճար, կամ մինչև 10 էջի պարագայում անվճար՝ դրանից ավել յուրաքանչյուր էջի համար՝ տեղեկության տրամադրման ծախսերը չգերազանցող գումարի դիմաց:

- **Փաստերը, որոնց վրա հենվում են սույն հայցի պահանջները**

- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (հետայսու՝ Կազմակերպություն) ոչ կառավարական կազմակերպություն է, որի կանոնադրական գործառույթները, նպատակներն ու խնդիրներն են՝ ի թիվս այլոց

  Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացման նպաստելը,

  Մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանությանը, տեղեկատվության ազատության ոլորտում իրավագիտակցության բարձրացմանը, կրթվելուն նպաստելը,

  Մարդկանց իրավաբանական և մասնագիտական խորհրդատվություն ստանալուն աջակցելը:

  Փաստը հաստատվում է Կազմակերպության կանոնադրությամբ և պետ.ռեգիստրի վկայականով (Փաստաթուղթ №№ 5.1., 5.2.):

- Կազմակերպությունը 07.05.2013թ «Տեղեկատվություն ստանալու» № 201-ի 2 հարցում (հետայսու՝ Հարցում) ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր (հետայսու՝ Կադաստր):

  Փաստը հաստատվում է Հարցման կրկնօրինակով (Փաստաթուղթ № 5.3.):
- Կազմակերպությունը Հարցումով Կադաստրից խնդրել է տեղեկատվություն.
  - Ե՞րբ, ի՞նչ իրավական ակտով, ու՞մ, ի՞նչ նպատակով, ի՞նչ իրավունքով (սեփականության իրավունքով, վարձակալության իրավունքով) և որքա՞ն ժամկետով է հատկացվել Փակ շուկան,
  - Խնդրում ենք տրամադրել Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի Փակ շուկայի հատկացման (սեփականության կամ վարձակալության հիմքերով) պայմանագրի (պայմանագրերի) պատճենը (պատճենները):
- Կադաստրը 18.05.2013թ № ԿԽ-1/1813 գրությամբ մերժել է Կազմակերպությանը տրամադրել հայցվող տեղեկատվությունը. մասնավորապես՝

  « … «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի պահանջների համաձայն անշարժ գույքի միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման համար մատուցվող ծառայությունների համար պետական բյուջե գանձվում է վճար նույն օրենքով սահմանված չափերով գանձապետարանում բացված համապատասխան հաշվին: Նույն հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ դիմողները պարտավոր են վճարել օրենքով սահմանված վճարները, իսկ 32-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է տեղեկատվության տրամադրման դիմումին կից տեղեկատվության տրամադրման վճարի մուծման անդորրագիրը ներկայացնելու պահանջը:

  Բացի այդ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանափակում է գույքային իրավունքների, դրանց ձեռքբերման կամ գրանցման հիմքերի վերաբերյալ տեղեկությունների մատչելիությունը՝ ամրագրելով, որ նման տեղեկությունները (այդ թվում՝ փաստաթղթերի պատճենների կամ քաղվածքների ձևով), այդ իրավունքների իրավատերերից, գրանցված իրավունքի սուբյեկտներից և նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված մարմիններից բացի այլ անձանց կարող են տրամադրվել իրավատերերի կամ գրանցված իրավունքի սուբյեկտների համաձայնությամբ, իսկ գործարքների կամ դրանց առանձին պայմանների վերաբերյալ տեղեկությունները

այդ գործարքների կողմերի և նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված մարմիններից բացի այլ անձանց կարող են տրամադրվել միայն գործարքի կողմերի համաձայնությամբ:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ Երևան քաղաքի Մաշտոցի պողոտա 5 հասցեի շուկայի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վերաբերյալ տեղեկատվությունը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված տեղեկությունների մատչելիության սահմանափակումների հաշվառմամբ, հնարավոր կլինի տրամադրել նույն օրենքի 74-րդ հոդվածով սահմանված չափով տեղեկատվության տրամադրման ծառայության վճարի մուծման անդորրագիր ներկայացվելու դեպքում:»:

- **Հայցի իրավական հիմքերը**

- ՀՀ Սահմանադրությունն, ի մասնավորի 27-րդ և 27.1-րդ հոդվածների, իր իրավազորության ներքո գտնվող անձանց, երաշխավորում է տեղեկատվության ազատության և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքները: «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ» աշխատության՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի դոկտրինալ մեկնաբանության մեջ, ի թիվս այլոց, գրված է, որ.

«Տեղեկատվության ազատության իրավունքը պետության վրա դնում է ինչպես նեգատիվ, այնպես էլ պոզիտիվ պարտականություններ: Պետական կառույցները ներազդում են տեղեկույթի վրա, նրա հրապարակայնության, մատչելիության, տարածման և սպառողին փոխանցման գործընթացի վրա: Տեղեկույթի մենաշնորհային տնօրինումը, ինչը բնութագրական է ամենից առաջ հակաժողովրդավարական հասարակությանը, արգելք է մարդու իրավունքների լիարժեք իրականացման համար: Բոլոր ժամանակներում իշխանության կարևորագույն սոցիալական գործառույթն է եղել տեղեկույթի չափավորումը, դրա հոգեբանական փաթեթավորումը: Դրա հիման վրա է կառուցված հասարակական կարծիքի մանիպուլյացիայի կառուցակարգը: Ամենահայտնի և հասարակ ձևը, որով իշխանությունը վերահսկում է տեղեկատվական հոսքերը, համարվում է գրաքննությունը (ցենզուրա): Այս դեպքում պետությունը պատասխանատու չինովնիկների օգնությամբ կառավարում է տեղեկատվական նյութի բովանդակությունը: Տեղեկույթի պետական մենաշնորհը և գրաքննությունը բումերանգի պես խփում են հենց պետությանը՝ տանելով հասարակությանը տնտեսական, քաղաքական և իրավական փակուղի: Չէ՞ որ տեղեկույթը ժողովուրդ-պետություն ուղղակի կապի միջոցն է: Ուղղակի կապի կամայական չափաբաժնավորումը միայն առաջին հայացքից է շահավետ կառավարման սուբյեկտի համար: Ի վերջո, այն հանգեցնում է հետադարձ տեղեկույթի վնասակարությանը, զտվածությանը, կողմնակալությանը: Իսկ դա անխուսափելիորեն կառավարման կարևորագույն՝ որոշումների ընդունման փուլում հանգեցնում է սխալների: Տեղեկատվությունը՝ տեղեկություններ (հաղորդումներ, տվյալներ) են՝ անկախ դրանց ներկայացման ձևից: Ի տարբերություն անձի մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվության, որի հավաքումը, օգտագործումը և տարածումը՝ առանց նրա համաձայնության, Սահմանադրությանը

համապատասխան չեն թույլատրվում, հանրային կյանքի վերաբերյալ տեղեկատվությունը, որպես կանոն, պետք է լինի բաց և հանրամատչելի:

Պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ապահովել իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը: Անձը, ով ցանկանում է անարգել ստանալ այդպիսի տեղեկատվություն, պարտավոր չէ հիմնավորել դրա ստանալը: Բացառություն է կազմում սահմանափակ մատչելիությամբ տեղեկատվությունը: Ֆիզիկական և իրավաբանական անձանց համար պետական տեղեկատվական աղբյուրների մատչելիությունը պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական և այլ կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև տնտեսության, բնապահպանության և հասարակական կյանքի մյուս ոլորտների վիճակի նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացման հիմք է հանդիսանում»:

Տեղեկատվության ազատության իրավունքը երաշխավորված է նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածով:

Այս իրավունքը բացարձակ չէ և Կազմակերպությունը դա ընդունում է, սակայն իրավաչափ է համարում այդ իրավունքի սահմանափակումը՝ «մի՛այն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»՝ ինչպես, որ դա երաշխավորված է ՀՀ Սահմանադրություն 43-րդ հոդվածով:

- Սույն հայցով Կազմակերպությունը պնդում է, որ
    - պետական մարմնի կողմից, տվյալ դեպքում՝ Կադաստրի կողմից, տեղի է ունեցել միջամտություն Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության իր իրավունքին,
    - իր իրավունքին միջամտությունը նախատեսված չի եղել օրենքով,
    - եթե միջամտությունը նախատեսված է եղել օրենքով, ապա այն անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում:

- Օրենսդրորեն երաշխավորված է տեղեկատվության ազատության իրավունքի իրացումը: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, ի թիվս այլոց, սահմանված է տեղեկատվություն եզրույթը, սահմանված են դրա ստացման ընթացակարգերը:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի «տեղեկությունը» դա անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ): Սույն գործով վեճի առարկա չէ այն հանգամանքը, որ Կազմակերպության կողմից փնտրվածը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ

օրենքի իմաստով «տեղեկատվություն» է, և, որ դրա տնօրինողը Կադաստրն է. այդ փաստը հաստատվում է Կադաստրի 18.05.2013թ № ԿԽ-1/1813 գրության բովանդակությամբ, որում վերջինս չի վիճարկում դրանք:
Կազմակերպության իրավունքին միջամտություն տեղի ունեցած կլինի, եթե գործադիր իշխանությունն ապահովված չլինի Կազմակերպության՝ Սահմանադրությամբ և օրենքով երաշխավորված իրավունքի իրացումը:

Փաստ է, որ Կազմակերպությունը փնտրել է տեղեկատվություն և այն՝ դրա տնօրինողից չի ստացել: Հետևաբար, տեղի է ունեցել միջամտություն Կազմակերպության՝ ՀՀ Սահմանադրությամբ, Կոնվենցիայով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքներին:

- Մնում է պարզել, արդյո՞ք տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու Կազմակերպության իրավունքներին միջամտությունը նախատեսված եղել է օրենքով, թե՞ ոչ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությունը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Այս հոդվածում նկարագրված նախապայմանն առկա է. Կազմակերպությունը Հարցմամբ դիմել է Կադաստրին:
Նույն օրենքի 10-րդ հոդվածում սահմանված է տեղեկատվության տրամադրման պայմանները. ըստ որի տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում, ի թիվս այլոց՝ հետևյալ դեպքերում. 2) մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս, 3) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս. 4) նույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների (այն տեղեկությունների համար, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը) տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս: Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը որոշելու սկզբունք, այն է՝ տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը՝ չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը: Օրենսդրի կողմից այս սկզբունքի ամրագրման անհրաժեշտությունը բխում է տեղեկատվության ազատության իրավունքի կարևորությունից, տեղեկատվության՝ ժողովրդավարական հասարակարգում, իրավական պետությունում և բնության մեջ՝ ընդհանրապես, զարգացման և առաջընթացի ապահովման հարցում՝ նրա դերով և նշանակությամբ:
Կադաստրը 18.05.2013թ № ԿԽ-1/1813 գրությամբ հայցվող տեղեկատվությունը չի տրամադրել (տրամադրելը մերժել է) վկայակոչելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը: Թեև Կադաստրի 18.05.2013թ № ԿԽ-1/1813 գրության մեջ չի կոնկրետացվում, թե ի՞նչ ծավալ է կազմում հայցվող տեղեկատվությունը և որքա՞ն գումար է պահանջում այդ տեղեկատվությունը տրամադրելու համար, սակայն պարզ է, որ փնտրվող տեղեկատվության համար Կադաստրը պահանջում է վճարել

ավելին, քան նախատեսված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով:

Համաձայն իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքների՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը: Այս սկզբունքն իրավանորմի ձևով ամրագրված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասում:

Կազմակերպության Հարցումը պարունակում էր նաև վերջինիս էլեկտրոնային փոստի հասցեն, ուստի՝ Կադաստրը պարտավոր էր հայցվող տեղեկատվությունը օրենքով սահմանված ժամկետում տրամադրեր առանձ գումար վճարելու պայման ներկայացնելու:

Բացի այդ, Կազմակերպության կողմից փնտրվող տեղեկատվությունը վերաբերում է Երևան քաղաքի պատմամշակութային արժեք հանդիսացող Փակ շուկային, որտեղ շինարարական աշխատանքներ են իրականացվում և ինչը, հանրության ներկայացուցիչների մոտ ստեղծված տպավորությամբ՝ ոչնչացվում կամ լավագույն դեպքում աղավաղվում է: Փակ շուկայի շուրջ Երևանում, սոցիալական ցանցերում և զանգվածային լրատվության միջոցներով ծավալվել է բուռն քննարկում, խնդիրը հանրային հետաքրքրություն է ներկայացնում, այն առնչվում է հանրության բարքերին, երևանցու իրավունքների և ինքնությանը: Կազմակերպության կողմից փնտրվող տեղեկատվությունը տեղավորվում է «Տեղեկատվության ազատություն մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նկարագրված տեղեկատվության հատկանիշների մեջ, հետևաբար՝ նույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով հարցումով փնտրվող տեղեկատվության համար գումար չպետք է գանձվի:

Կամ Կադաստրը պարտավոր էր իր մերժման մեջ նշել, թե քանի էջով է գերազանցում փնտրվող տեղեկատվությունը անվճար տրամադրման ենթակա է(երի քանակից և հայտներ, թէ իր մոտ, որքա՞ն արժե 1 էջ տեղեկատվություն տրամադրելու ինքնարժեքը:

Կադաստր վերը նկարագրված գործողություններից ոչ մեկը չի արել:

- Կադաստրը Կազմակերպության՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների իրացումն ապահովելու համար, պարտավոր էր կատարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի երեք ենթակետերից որևէ մեկով նախատեսված գործողություններից ցանկացած մեկը: Բոլոր երեք կետերով նախատեսված գործողությունների համար հատուկ՝ առավելագույն ժամկետ է սահմանված՝ 5 օրը: Կադաստրը՝ Հարցումը ստանալու պահից հնգօրյա ժամկետում չի կատարել վերը նկարագրված գործողություններից ոչ մեկը:

Հետևաբար՝ միջամտությունը նախատեսված չի եղել օրենքով և, հետևաբար՝ Կադաստրը իր ոչ իրավաչափ գործությամբ խախտել է Կազմակերպության ՀՀ Սահմանադրությամբ, Կոնվենցիայով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքները:

- Կազմակերպության իրավունքների խախտումը հաստատված համարելու հանգամանքը բավարար է, որպեսզի ծագի՝ դրանից ածանցվող պահանջի՝ Կազմակերպությանը

փնտրվող տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի իրավաչափությունը:

Տեղեկատվության տնօրինողն իրավասու է սահմանափակել տեղեկատվություն փնտրողի իրավունքը, եթե փնտրվող տեղեկատվությունը դասվում է ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների շարքին, իսկ այդ սահմանափակումները կոնկրետացված են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում: Դրանք են այն տեղեկատվությունները, որոնք՝

1) պարունակում են պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
2) խախտում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
3) պարունակում են հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
4) բացահայտում են մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
5) խախտում են հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի.

«1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝
ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.
բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով»:

Վերևում բերված փաստարկներից հետևում է, որ Կադաստրն իր մերժումով խախտել է ՀՀ Սահմանադրության 27, 27.1.-րդ, Կոնվենցիայի 10-րդ հոդվածները, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը:
Հետևաբար՝ Կադաստրի՝ 18.05.2013թ № ԿԽ-1/1813 մերժումը ոչ իրավաչափ է:

- **Հայցվորի պահանջը**

Հիմք ընդունելով վերոգրյալը

խնդրում ենք

- Պարտավորեցնել՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը տրամադրել 07.05.2013թ «Տեղեկատվություն ստանալու» № 201-ի 2 հարցումով փնտրվող տեղեկատվությունն՝ անվճար

կամ

- Պարտավորեցնել՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը տրամադրել 07.05.2013թ «Տեղեկատվություն ստանալու» № 201-ի 2 հարցումով փնտրվող տեղեկատվությունը՝ 10 էջի գերազանցող յուրաքանչյուր էջի համար՝ տեղեկության տրամադրման ծախսերը չգերազանցող գումարի դիմաց:

Հայցվորի ներկայացուցիչ՝

..... Արտակ Զեյնալյան

19.08.2013թ, ք. Երևան:

- **Ապացույցների ցանկ**

- Գրավոր ապացույց – Կազմակերպության կանոնադրությունը՝ լուսապատճենի ձևով. վերաբերելի է Կազմակերպության կանոնադրական գործառույթների շրջանակներում գործելու փաստին,
- Գրավոր ապացույց – Կազմակերպության պետական ռեգիստրի վկայականը՝ լուսապատճենի ձևով. վերաբերելի է Կազմակերպության իրավաբանական անձ (գրանցված) լինելու փաստին,
- Գրավոր ապացույց – Կազմակերպության 07.05.2013թ «Տեղեկատվություն ստանալու» № 201-ի 2 հարցումը՝ կրկնօրինակի ձևով. վերաբերելի է հարցում ներկայացնելու, դրա բովանդակության փաստերին,
- Գրավոր ապացույց – Կադաստրի 18.05.2013թ № ԿԽ-1/1813 գրությունը՝ լուսապատճենի ձևով. վերաբերելի է Հարցմանը մերժելու փաստերին:

- **Հայցին կցվող փաստաթղթերը**

- «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 19.08.2013թ երեք տարի ժամկետով Արտակ Զեյնալյանին տրված № 4862 լիազորագրի լուսապատճենը,
- Սույն հայցի 6-րդ կետում թվարկված ապացույցները,
- Սույն հայցը և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողի կողմից ստանալը

հավաստող փաստաթղթի պատճենը,

- Սույն հայցը և կից փաստաթղթերի պատճենները ՀՀ ֆինանսների նախարարին ուղարկելը հավաստող փաստաթղթի պատճենը: